ԺԶ.

ՅԱԿՈԲԸ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՌՃԺ = 1662, ՅԱՆՈՒԱՐ 12.

(Նոհիրակ առաքէ զՏէր Յովհ. Վարդապետ առ Նիկողայոս արքեպիսկոպոս և առ Լեհահայս, խնդրելով և տուրս վասն պարտուց Էջմիածնի)։

ԵՍՈՒՍԻ Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն Հայոց և պատրիարգ Վաղարշապատու լուսապսակ և երկնահանդէտ գերապատիւ և հռչակաւոր վեհափառ և հրեշտակապար սրբոյ մեծի աթոռոյս Էջմիածնի. Յորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան, շնորհք առաքելական և աստուածային առատահոս աւրհնութիւն, հանդերձ նախախնամական գթութեամբն ի վերայ հաւատարիմ և իմաստուն ծառայիցդ Քրիստոսի և ճշմարտապէս հոգեւոր մատակարարիդ, և իսկութեամբ ցաւակցաբար ցաւակցողիդ և մտերիմ հարազատագոյն հարազատիցդ, և սրտէ սիրեցեալ որդւոյդ մերոյ, և մեծափառ հոգեւոր ծնողիս աստուածընկալ սրբոյ աթոռոյս Էջմիածնայ փառք և պարծանք՝ Լեհաց երկրի աստուածապահ քաղաքացդ. Նախ, հաւատարիմ և սիրելի եղբօր մերոյ Նիկողայոս արհի եպիսկոպոսիդ, և քահանայիցդ և Բիժ Դատաւորացդ, և առհասարակ ժողովրդոցդ առ հասարակ ամենայնի։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն անսկզբնական Էին, և ողորմութիւն նորին էակից Բանին, նախախնամութիւն և գթութիւն փառակից Հոգւոյն ճշմարտի գետօրէն ծաւալեսցի, անճառ բղխմամբ պարգեւեսցի, հրահոսան իմամբ տեղասցի, անսահման պայմանաւ ցօղեսցի, անձրեւահեղ տարածեսցի, և մշտազուարճ առեղիցի. ամէն։ Աւրհնեսցէ զձեզ Քրիստոս Աստուածն յաւիտենական, պահելով անփոփոխ և անսասան, երկարաձգեալ ամօք յարամնայական, զարդարեալ առաքինութեամբ հոգեկան, լրացեալ ընչեղիւք մարմնական, և ուռճացեալ փառօք գերազանցական, պերճացեալ ուստերօք յոգնական և պճնեալ դստերօք զանազան. Նախախնամեալ սիրելեօք յարաձգական և բարեկամօք միշտ յաւիտենական. Ննջեցելոց տացէ կեանս անթառամ յաւիտենից յաւէժ և առ յապագայն. ամէն։

Եւ ընդ սիրոյ նամակիս յայտնի լիցի սիրելեացդ իմոց, զի ահաւասիկ զսիրելի և զհաւատարիմ որդին մեր զՏէր Ովանէս վարդապետն առաքեցաք ի կողմանս ձեր, հանդերձ սրբալոյս մեռոնաւ, որ եկեալ նուիրակութեամբ և